Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 94 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՍՐԱՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի զարգացման խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական ծառայությունների բարելավում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Իզմիրլյան բարեգործական հիմնադրամ (Երևան, Մելիք-Ադամյան 2/1, ՀՎՀՀ՝ 02819088)
4.	Ծրագիրը կատարողը	«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ (Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ (Երևան, Մկրտիչ Յաղուբյանի նրբանցք 13, ՀՎՀՀ՝ 00841035), սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	5,662,750 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի փետրվարի 15-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի վերականգնողական աշխատանքների համար նախատեսված սենյակների և ֆիզիոթերապիայի սրահի վերանորոգում՝ 5,662,750 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 15-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 5,662,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ